

Արձանագրություն 20

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2007 թվականի սեպտեմբերի 24-ի
հարցման կարգով նիստի

Քննարկեցին.

Ելնելով նրանից, որ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհուրդը՝ 2007 թվականի սեպտեմբերի 7-ին կայացած նիստում այդ նիստի օրակարգի 1-ին հարցի «զ» կետի վերաբերյալ որոշեց՝ - «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» Ծրագրի «Գնումների գործառնական ձեռնարկը քննարկել և հաստատել հարցման կարգով՝ հաջորդ շաբաթվա ընթացքում «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից Ձեռնարկի հայերեն լեզվով տարբերակի ներկայացումից հետո», ինչպես նաև՝ ելնելով ծրագրով նախատեսված ժամկետներում ներքոնշյալ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունից, Կառավարման խորհուրդը **2007 թվականի սեպտեմբերի 24-ին հարցման կարգով քննարկեց.**

1/ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» Ծրագրի Գնումների գործառնական ձեռնարկը **հաստատելու** հարցը /տեղեկանք 1-ը կցվում է/,

2/ «Ոռոգման 6 ինքնահոս համակարգերի նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների մրցույթի տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման համակցված արդյունքները /տեղեկանք 2-ը կցվում է/, և,

3/ Պայմանագիր No RRRP-CW-01/2007 «*Հ-17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի կմ 49+300 – կմ 60+960 ճանապարհահատվածի վերականգնում*» և Պայմանագիր No RRRP-CW-02/2007 «*Հ-17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի կմ 60+960 – կմ 73+780 ճանապարհահատվածի վերականգնում*» մրցույթների արդյունքները /տեղեկանք 3-ը կցվում է/:

Որոշեց.

1. **Հաստատել** «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» Ծրագրի Գնումների գործառնական ձեռնարկը:

2. **Հաստատել** «Ոռոգման 6 ինքնահոս համակարգերի նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների մրցույթի տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման համակցված արդյունքները:

3. **Հաստատել**՝ Պայմանագիր No RRRP-CW-01/2007 «*Հ-17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի կմ 49+300 – կմ 60+960 ճանապարհահատվածի վերականգնում*» և Պայմանագիր No RRRP-CW-02/2007 «*Հ-17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի կմ 60+960 – կմ 73+780 ճանապարհահատվածի վերականգնում*» մրցույթների արդյունքները:

Ս. Սարգսյան	ՀՀ վարչապետ, կառավարման խորհրդի նախագահ
Հ. Աբրահամյան.....	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վ. Ներսիսյանց	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Վ. Խաչատրյան.....	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար

Դ. Լոբյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Ա. Մանուկյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Տ. Ղազարյան.....	Շենիկ ՋՕԸ վարչական խորհրդի նախագահ
Ն. Վարդանյան.....	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ գործադիր տնօրեն
Վ. Սողոմոնյան.....	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ նախագահ
Վ. Համբարձումյան.....	«Գյուղատնտեսական Ասոցիացիաների ֆեդերացիա» ԻԱՄ նախագահ
Կ. Նազարյան	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամի նախագահ

Ռ. Ղազարյան..... *«ՀԱՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավաբան, Կառավարման խորհրդի քարտուղար*